

րորդ դարում. երբ կարելի էր գրել նաև հայերէն, այլ չորրորդ դարու երկրորդ կիսում, ոչ ուշ քան 391 թւականը. երբ չէր կարելի գրել հայերէն լեզուով, քանի որ հայոց տառերը գտնւեցին աւելի ուշ, և դրել է լուծարէն լեզուով, բայց որ նա թարգմանւել է հայերէն 5-րդ դարում:

Բայց, ըստ մեզ, հեղինակը ի դուր է ալեքան արհամարհում գիտնականների կողմէնակի ապացույցները փաւստոսի լոյն լինելու մասին: Երես 4—5 արած տրամաբանութիւնը մեզ թւում է թույլ: Մի պատմագիր, որը կրում է ոչ հայկական անուն և, առհասարակ, ուրիշ նշաններ է ցույց տալիս իւր հալ չը լինելուն և լոյն լինելուն և դեռ պնդում էլ է, թէ Ներսէսի լաջորդները զրկւեցին և պիսկոպոս ձեռնադրւելու իրաւունքից, բնական է, որ ապապիսի մի հեղինակ մեծապէս աւելիք է աւելիս կարծելու, որ նա հալ չէ և զած, այլ օտարական և թրեւս հայոց եկեղեցու թշնամի: Թէպէտև ճիշդ է, որ ալդ բոլորը դեռ ևս զբաղական ապացույցներ չեն: Այդպիսի

վկայութիւնների դիմաց թող է երեւում հեղինակի հակա-ապացույցը. «Մի մարդ, ասում է պ. Մաղաթեանը, որ ալեպիսի խորին ակնածութեամբ է խօսում Նուսուրջի տոմարի մասին, չէ կարող հայոց եկեղեցու թշնամի լինել» (եր. 5):

Նազդրի խսկութեան մասին հեղինակը պնդում է, որ փաւստոսի պատմութեան մի բաւական նշանաւոր մասը կորել է, թերի է նաև ԺՋ դուլմները, բայց որ միւս կողմից՝ փաւստոսի բնագրի մէջ մոտ գործած անհարազատ հասւածների քանակութիւնը ալեքան աննշան է, որ ալման բնագիրը քիչ է որոշւում սկզբնական բնագրից:

Գիրքը զրւած է շատ ոահուն և աշխույժ լեզուով և կարողացւում է մեծ հետաքրքրութեամբ: Նկատւեց նաև, ի վերջոյ, որ պ. Մաղաթեանը իւր ուղղագրութեան մէջ հետևել է միւս երկրորդաբար ֆիլոսոֆներին՝ անձալն «ո» տառի նկատմամբ, ասել է թէ լարել է «Աղբեր»-ի և «Մուր»-ի ուղղագրութեան:

Ա. Ա.

ՆԱԶԱՐԵԱՆՅ, սարկաւադ ՅՈՎՀԱՆՆԷՍ. «ՕՐԱՅՈՑ», 1890 թ. Գր. և Հայկալ ՏՅԶԲ—4382 թ. (չորրորդ տարի). Թիֆլիս, տպ. Մարտիր., 16-աժալ. 255 երես, տառ № 10: Գինն է 20 կոպ.:

Բացի օրացուցից, զբաղվել ունի լատււած, ուր պարունակւած են հետևալ նիւթերը. 1) Տօն օրերը հայոց ուսումնարանների համար. 2)

Ծխակ.-եկեղ. ուսումնարանների պաշտօնական ծրագիրը. 3) Կովկասի մասին աշխարհագրական տեղեկութիւններ. 4) Բաւարան եւրոպական

բառերի և ոճերի. 5) Կերակրի և ըմպելիքի մասին տեղեկութիւններ. 6) Բժշկական. 7) Դիմապուշակ. 8) Բարոյական մտքեր. 9) Աղօթք:

Յաւելւածը բռնում է գրքովի մօտ 200 հրիւր և շատ հետաքրքրական է: Կովկասի մասին աշխարհագրական տեղեկութիւնները քաղած են լաւ աղբիւրից՝ Վէլդենբաումի «Путеводитель по Кавказу», 1888 թ. չափնի գրքից: Այդ բաժնում ընթերցողը կը գտնի, իսցի ընդհանուր տեղեկութիւններից Կովկասի մասին, նաև բաւական լիովին տեղեկութիւններ բազմաթիւ գիւղաքաղաքների մասին, որոնք լատուկ են բոլոր ուղեցոյցներին: Տեղերը զաստուրած են արականերով՝ Ռոսսով—Վլադիկաւկապ, Վլադիկաւկապ—Պետրովսկ, Վլադիկաւկապ — Թիֆլիս, Թեմիրխան-Շուրա—Բագու, Նովորոսիսկ—Բաթում, Բաթում—Թիֆլիս—Բագու—Կարս—Երևան:

Դա մի ուղեցոյց է, որը պէտք է ամենքը ունենան, մանաւանդ ճանապարհորդները:

Բառարանը նմանապէս չափազանց օգտակար կերպով է կազմւած. և, իրօք, եւրոպական խօսքեր ալեքան են պատահում մամուլի և խօսակցութեան մէջ, ուր աչժմեան ընթերցող հալը մի ալիպիսի բառարանի կարօտութիւն պէտք է վաղուց քաշում լինի: Բառարանը բռնում է 100 հրիւս և բացատրում է, ըստ երևութիւն, 800—1000 եւրոպական բառեր և ոճեր, որոնք մօտք են գործած մեր լեզուի մէջ. բառերի բացատրութիւնները, ընդհանրապէս, ճիշդ են: Բայց կազմողը ի գուր

է օտար բառերից մի քանիսի մէջ հետեւել ողուաց վերջաւորութիւններին. օրինակ, աւելի լաւ է ասել՝ մանուֆակտուր, քան թէ մանուֆակտուրա, նոմէկլատուր, քան թէ նոմէկլատուրա, պրօգրամ, քան թէ պրօգրամմա, չը նաւած որ շատերի համար լաւ կանոնին հետեւած է՝ բուտին, պիէս, սիստեմ, ինտրիգ, Կան տառասխալներ՝ պիսեմիստ, յիվիդենա, բիւթէլա, Կան ոչ չատ լաջող բացատրութիւններ՝ էքսպլուատացիա—օգուա քաղելը, օգուակարութիւն. Վերջին խօսքը սխալ է, նորա տեղ պէտք է լինէր՝ հարստահարութիւն: Շանտաժ՝ փողի հտեից ընկնելը: Շատ և շատ սխալ է թարգմանւած Ուտիլիտարիստներ խօսքը:

«Դիմագուշակ» բաժնի օղակարութիւնը շատ կասկածելի է: Այդպիսի ժողովրդական գրքովներումնա մոլորեցուցիչ է, որպէս «Նրադահանը», թէն աւելի անմեղ, բան վերջինը: Գովաստով պիտի վիշեք, որ «Նրադահանը» զուրս է ձգւած ալս օրացոյցից:

Ընդհանրապէս կարող ենք լան ձեռարարել Սարկաւապ Յ. Նաղարեանցի օրացոյցը ձեռք բերելու:

Ի վերջոյ մի երկու խորհուրդ կազմողին: Վանի որ նորա օրացոյցը ամեն տարի զանազան բովանդակութիւններ ունի և ամեն անգամ էլ հարուստ է շատ օգտակար բաժիններով, լաւ կը լինէր, որ նորա օրացոյցը աւելի մեծ գիրքով հրատարակէր, առանց թէկուզ ծաւալը մեծագնելու. որպէս զի մի

քանի տարւալ օրացուցներ չաւել-
ւածները կարելի լինի միասին կազ-
մել և, իբր գրքեր, գրադարանում
ունենալ: Կազմողը ամեն տարի կը
տար թուանդակութեան ընդհանուր
ցուցակը, երեսների ցուցմունքներով:
Հետաքրքրական դարձնելու համար,
ալն ժամանակ, կազմողը ստիպւած
չէր լինի ամեն տարի կրկնել արդէն

հրատարակածները. իսկ եթէ ուժ-
մեան ձևով շարունակել, առաջւալ
տարիների չաւելածները կը կորչեն:
Ասածս նպատակի համար պէտք է
չաւելածների երեսները իրանց թը-
ւերը ունենան և շարունակւին ամեն
տարի՝ մինչ մի հատոր կազմելը և
նոր հատորի սկսելը:

Ա.

ԱՂԱՆԵԱՆՑ ԳԻՒՑ քահանայ. «ՀԱՏՈՒԱԾԱԿԱՆ ՕՐԱՅՈՑՑ. 1890 թ. ա-
կանի համար. տպ. Մարտիրոսեանցի: Գինն է 1 ր.

Աս երկրորդ տարին է, որ կազ-
մողը հրատարակում է իւր հաւ-
ւածական օրացուցը: Դա՝ պատի
օրացուց է, որի ամեն օրւալ թեր-
թիկը կտրուում է, լաջորդ օրւալ
թերթիկը բացելու համար: Գաղա-
փարը վերցրած է «КАВЕАЗСКИЙ Ка-
лендарь» անունով պատի օրացուցից,
որը տարիներից ի վեր հրատարա-
կում է Կովկասեան ստատիստիքա-
կան կոմիտեար: Ամեն օրւալ թեր-
թիկի վերալ նշանակւած է ալն բո-
լորը, ինչ միւս օրացուցներում կա-
ն, բացի դրանից, չիշատակւած է
ալի թւին պատահած մի կամ մի
քանի կարևոր զէպքեր: «КАВЕАЗСКИЙ
Календарь»-ի օրացուցը քաղում է
իւր նւթը, մեծ մասամբ, Կովկասի
վարչական և պատերազմական կեան-
քից, իսկ Ազանեանցիներ՝ հայկական
կեանքից:

Ալի օրացուցի ձևը ունի առա-
ւելութիւններ, որոնք նրան չարմար
են դտրձնում մանաւանդ կօնտօր-

ների համար: Գրական մասը երկ-
րորդական դեր է խաղում: Բայց
հէնց ալի է մեղ վերաբերելին: Արդ,
պէտք է խոստովանած, որ ալի բա-
ժինը կարելի էր դու ևս մշակել:
Նախ, շատ են զանցառութեան ար-
ւած ընդհանուր կովկասեան
եղելութիւնները, որոնց նկատմամբ
շատ հարուստ է «КАВЕ. КАЛ.» պա-
տի օրացուցը: Հայկական կեանքը,
Կովկասում, շատ կողմնորով նաև
ընդհանուր կովկասեան կեանք է:
Մի՞թէ կովկասեան զանազան հիմ-
նարկութիւնները՝ դատարան, վար-
չութիւն և ալլն, մեղ չեն վերաբե-
րում: Բայց զանք աւած տեղեկու-
թիւններին: Ալտեղ մենք նկատում
ենք մի չափազանց մեծ երկրպագու-
թիւն մի քանի անուններին: Օրի-
նակ՝ չալտնւած է պրօֆ. Փերովը
Պատկանեանի հօր մահը (15 յունւ.),
մի ինչ որ «քաջ նկարիչ և երկելի
պատկերահան» տիրացու Ռաֆայելի
մահը (27 յունւ.): Ի՞նչ նշանակու-